

ԳԵՌԱՀԱՄՆԵՐԻ ԸՆԹԵՐՅԱՆՈՒԹԻՒՆԸ

ՅՈՎՀ. ՏԵՐ-ՄԻՐԱՔԵԱՆՅԻ

(Շարունակութիւն 1)

Գ. ՓՈՒՍԿԻՐՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՆՐԱ ԿԵՐՊԵՐԸ

«Ժողովրդի ընթերցանութիւնը» գրքոյկում սրտաբան տեղեկութիւններէց երևում է, որ ժողովուրդը բեւբարիստական փոխադրութիւններ չի սիրում, նրանց սառնութեամբ է վերաբերում: Եթէ այն համոզմունքին ենք, որ շեռահասի գիրքն էլ պէտք է գեղարեստական կապարեալ արտադրութիւն լինի, ինքն ըստ ինքեան կասկածանքով պիտի վերաբերենք փոխադրութիւններին, որոնք աննշան ըացառութեամբ ոչ այլ ինչ են, եթէ ոչ՝ աղմատումներ: Թէ ինչ սարեր ու ձորեր կան ընագրերի և փոխադրութիւնների մէջ, այդ ցոյց է սալիս, օրինակ, գերման երևելի պարամարան ու գրականութեան պարամարան Գերլինուսի այն տեղեկութիւնը, որ նա իր քննադատական հայեացքը կրթել ու սրել է շնորհիւ այդ երկու տեսակ գրածքների համեմատութեան: Մինչդեռ մարդիկ գեղարեստի միւս արտադրութեանց առանց այլ և այլութեան չեն մօտենում, բանաստեղծականի փոխադրութեան գործը շարերին հասարակ բան է թւում: Բաց ինչ անել. քանի որ առանց այն էլ մեծ պահանջ է զգացում շեռահասների ընտիր գրքերի, մի՞թէ ձեռք վերցնել փոխադրութիւնից ու զրկանք պատ-

1) Տես «Մուրճ» № 2—3, 4—5.

Ճառել շեռահասներին՝ նրանց բոլորովին անմասն թողնելով ընտիր հեղինակների ընթերցումից: Այն պէտք է փոխադրութիւններ էլ անել, բայց այդ ամէն մի գրչի բանը չէ: Բանաստեղծութիւնը կարող է միայն բանաստեղծը փոխադրել, որովհետեւ միայն մասնագէտը ձեռնհաս է գիրակցելու, թէ որ և է արտադրութեան հիմնական ոգին ու գեղեցկութիւնը որ տարրերի վրայ է կաշանում, թէ որոնք են արդեօք մի պատկերի բնորոշ գոյներն ու սուէրները և որոնք երկրորդականները. այն միայն նկարիչը կարող է գիրեանալ, թէ ինչ եւ ինչպէս կարելի էր զանց առնել՝ մատաղահաս ընթերցողի պահանջներին համակերպելու համար: Այսպէս՝ երբեմն հնարաւոր է լինում ամբողջ էջեր գեղչելու, իսկ երբեմն էլ՝ և ոչ մի բառ: Նախադասութիւնների, ոճերի, նոյն իսկ բառերի այս կամ այն կերպ շասաւորութիւնը կարող է հեղինակի՝ միտքը փոխել, հեգնութիւնը լրջութեան փոխարկել, գործող անձերի կենսագծերն ալակերպել: Իսկ երբ գրիչ շարժողը բանաստեղծն է, նա առաջադրած երկի ոգին մի անգամ ըմբռնած լինելով՝ գիտէ արդէն, թէ ինչպէս պէտք է այդ նիւթը մշակել, որ երկը վերաստեղծելով նոյն իսկ առաջնակարգ արտադրութիւն շատնայ: Ժամանակակից բանաստեղծները կարող են նոյն իսկ հին նիւթերը, ինչպէս օրինակ՝ Զիգֆրիդեան զրոյցները շիւրաւ վերաստեղծել, որովհետեւ զրոյցն անհասկան բնաւորութիւն չի կրում, նա ժողովրդի և ոչ թէ անհատի երեակայութեան արդիւնք է:

Փոխադրութիւնները զանազան տեսակ են լինում: Եմիտիր Ռիսսականը, որ թարգմանել է Փ. Վարդանեանը, ըովանդակութեամբ շատ մօտ է ընագրին և, ինչպէս վերահասու եղաց, միայն տեղ-տեղ զանց են առնւած մարդկային կեանքի ու բնութեան տեսարանների համեմատական պատկերները և այն կրկնութիւնները, որ Հովերոս՝ իբրև նայիւ բանաստեղծ՝ բնական բան է համարել Ռիսսեսի բերանը շնել: Զէ որ առօրեայ կեանքում հետաքրքիր մարդկանց հանդիպելիս նորից ու նորից պատմում ես, երբեմն նոյն իսկ աւելի էլ «ծաղկեցնելով» քո գլխից անցածները, քո կեանքի նշանաւոր արկածները:

Մի այլ տեսակ փոխադրութեան օրինակ է Գրաթ Ա. Կ. Տոլսույեի «Князь серебрянный» երկից արած ժողովրդական գրքոյկինը: Փո-

խաղաղիչը մի կողմից փասնեալ էջեր է զանց առել, իսկ միւս կողմից էլ փեղ-փեղ բնագրի իսկական խօսքերը ամբողջ հարւածներով է մէջ բերել: Ընագրի գլխաւոր նպատակը քաղաքակրթական (կուլտուրական) երևոյթներէ՛ ճէսերի, սովորութիւնների, սնապաշտութիւնների, արդ ու զարդի և այլն նկարագրութիւնն է, իսկ փոխաղաղիչն ընդհակառակն այս փարբերը կամ բաց է թողել կամ հարեանցի է անցել նրանց վրայից: Երկրորդական նշանակութիւն ունեցող գլուխների հետ նա զեղչել է նաև կարևորները: Այս փոխաղաղութեան մէջ աչքի է ընկնում զործողութեանց հոգեբանական շարժառիթների զարգացման բացակայութիւնը: Փոխաղաղիչն այնպիսի աններելի փոփոխութիւններ է արել, որ օրինակ անընկճելի բոյեար Մարգովի բռնած շիրքը անագորոյն Իօհան Գրոզնու նկարմամբ բոլորովին խախտել է:

Փոխաղաղութեան նրորորդ փեսակի յայտնի օրինակներն են Ռոբինզոնադները, որոնք մի հիմնական վէպի յարավէպից (էպիզոդից) են առաջացել և որոնց մէջ կան, ի հարկէ, հմուտ բեղբորիսորների գրչով Դեւահասների համար պատրաստուած ընտիր գրւածքներ: Դոն Քիշոտի և Գուլլիվերի ուղևորութեանց բազմապիսի փոխաղաղութիւններն էլ կան, բայց այս գրւածքները յայտնի պատճառներով պէտք էր աւելի հասուններին վերապահել: Շատ համառօտաճները, ինչպէս Թ. Հ. Հ. Ընկերութեան պատկերազարդ Գուլլիվերը, իհարկէ, բոլորովին զուրկ են լինում իրանց հիմնական բնարանից, ուստի և աչքալիսիներին շատ անգամ պարոդիա (խեղկափակեալ բանաստեղծութիւն) անունն են տալիս: Բայց նոյն ընկերութեան հրատարակած ընդարձակն էլ չէ՛ որ իսկապէս մի պատմական պարսաւագրութիւն (պամֆլէտ) է անգլիական կեանքից (պես Տէն), որ շատ քիչ կապ կարող է ունենալ մեր սովորական ընթերցողի աշխարհայեցողութեան ու կեանքի հետ: Այդ գիրքն իր նպատակին քիչ թէ շատ հասցնելու համար գոնէ մի բացառական յառաջաբան պէտք էր շնել: Բերլինի յայտնի քննադատ Լէօ Բերգը, ասում է, որ նա և իր մանուկ հասակակիցները «համաշխարհային գրականութեան այս դառնագոյն գիրքն իբրև հէքիաթ էին վայելում»:

Կան այնպիսի փոխաղաղիչներ էլ, որոնք որևէ ինքնուրոյն բան անելու անզուսպ փենչից վարակւած՝ վեր են առնում օրինակ Ան-

դերսէնի ու Գրիմի հէքիաթների պէս զուր մանկական գրածքները և փոխադրելով միայն իրանց անճաշակութեան ու անմտութեան կնիքն են շնուճ նրանց վրայ: Այդպէս է վարել, օրինակի համար, Արնշը Գրիմի հէքիաթների հետ, Փոզիցը՝ Նեբէլի «Համառօտ պարմածքներ մանուկների համար» գրածքների հետ ¹:

Փոխադրիչներն ազատութիւն ունեն ամբողջ գլուխներ ու շարձաձներ սղելու, և ապա իրանց բառերով եր պարմելու, լրացուցիչ բացատրութիւններ ցալով: Բայց ծաւալի սղման խնդիրն այն աստիճանի էական է, որ մեծ խնայողութիւն ու նրբամտութիւն պէտք է գործ շնել, որպէս զի բանաստեղծութիւնն այդ անշամանապարտութեան շնորհով իր ոգին չփոխէր: Ռոբինզոնն ու Դաւիթ Կոպէրֆիլդն աւելի ճկուն են, քանի որ նրանց բնագրները արտաքոյ կարգի հարուստ ու բազմակողմանի բովանդակութիւն ունին, իսկ ինչ վերաբերում է Գրիմի հէքիաթներին՝ նրանք համարեա թէ այլ ևս անփոփոխելի են: Այս երկու պեսակների մէջ ծոլափոշի վերջիչիալ «Князь серебрянный» ին իր կազմութեամբ միջին շիրք է բռնում: Բայց մեր վեր առած այս սուսերէն փոխադրութիւնը քիչ արժէք ունի. մի այսպիսի շիրք պէտք էր մեր մայրնացոյց արած կէտերն անտես շառած վերարտադրէր, մինչդեռ այս շիրքով փոխադրութիւնը միայն տեղ-տեղ առկայծում է ցաղանդի նշոյլները: Ա. Մ. Ալիվեցկու «Սորամանկ աղւէսը» մանկական գրածքի փոխադրութիւնը, որ Թ. Հ. Հ. Ընկերութեան յանձնարարութեամբ արել է պ. Պաշտանցը, ինչպէս այլ առիթով էլ ջիշեցի, այնքան ընտիր է, որ կարծես թէ հէնց նրա իսկական հեղինակութիւնը լինէր: Ահա մի գեղեցիկ օրինակ այն պահանջի, որ փոխադրիչն էլ պէտք է բնականորէստ լինի: Պէտք կար միայն ցաւառական ոճերը տեղն ու տեղը գրականութեան մէջ ընդունւած շարձաձներով բացատրելու: Սիրելի է յուսալ, որ այսուհետեւ մեր ժողովրդի սրտագէտ վիպագիրը մանկական աշխարհին այլ ևս այսպիսի սիրուն գրածքներ ցայ ²: Ն. Տէր-Աւետիքեանի «Փայտաշէն

¹ Օրինակները տես Վոլգաստի *Das Elend unserer Jugendlitteratur*» գրածքում:

² Վերջերս հասած տեղեկութիւնները չորեկանի առթիւ ցոյց են տալիս, որ նա արդէն ուրիշ բաներ էլ պարտատել է ու շարունակում է պարտատել:

խրճիթից մինչև սպիտակ տունը» փոխադրութիւնն էլ բաւականին նպաստեալ որ Կալուրութիւն է գործում, որ չի կարելի ասել օր. Տէր-Մարկոսեանցի թարգմանած «Թովմաս եղբօր փնակի» մասին: Այս գիրքը, որի վարիանտները մանկական աշխարհում ամենասիրելի գրքերն են, մեզանում 1880 թ. թարգմանել է մի անշնորհ փոխադրութիւնից և 1530 օրինակից մինչև 1897 թ. մնացել էր շուրջ 356 օրինակ, մինչդեռ մի բաւական միջակ գիրք՝ «Մուկուշի հաւիկը» որ 1894 թ. էր հրատարակել, 1200-ից իջել էր նոյն 1897 թ. մինչև 104: Ընտիր ու խելացի փոխադրութեան իբրև օրինակ կարող է ծառայել նաև Մոսկուայի Հ. Ո. Գ. Ընկերութեան «Ընչով են ապրում մարդիկ» 1. Տոլստոյի գրեածքից արածը՝ Նիստու կացի, կահկարասիքի նկարագրութիւնները, ոճերն այնպէս են փոփոխուած, որ կարծես թէ հէնց հայկական կեանքից ես կարդում: Հրեշտակ-կոշիկարն էլ շերձակի է փոխարկել, որ սուսպրանք անող հարուստ պարոնի համար փոխանակ երկար բկով կոշիկ կարելու՝ արխալուխ կարէ: Եւ երբ տէրը մի.ս օրը մեռնում է, ծառան գալիս արդէն պատրաստի տեսնում է, որ շերձակ՝ իրանց ուզած պատրանքը արխալուխի տեղ՝ առանց իրանց ասելուն՝ արդէն կարել պատրաստել է: Գաւառական ոճերն ու բառերն էլ գրեածքին հայկական ոգի են ներշնչել:

Այսպէս անւանեալ «Բարոյակրթիչ նպատակներով» փոփոխութիւններ անում են վերին աստիճանի «փափկանկար» գրիչները, օրինակ գերմանական փոխադրիչներից շապերը, որոնց համար մեղք բան է, եթէ հէքիաթն ասում է. «Բաշիկն իր կնոջ հետ ջուրը մտաւ կամ թէ՛ սիրուն փափիլիկ սագիկները, խորակ օրհորդներին նման...»: Ի հարկէ, նա, որի երեւակայութիւնն անընդունակ է բանաստեղծական սաւառման, շարունակ գետնին կպած է մնում. այգուպիսին միշտ ահ ու գոլի մէջ է, չլինի թէ այս կամ այն համեմատութիւնը, պարկերը մեղանչական լինի, մանուկների անմեղ սրտերը գայթակղեցնէ: Բայց այդ մարդիկ չգիտեն, որ հէնց այդ կասկածորութիւնը, այդ անմիտ քողարկութիւնն է շատսիրարկութեան մէջ, որ թունաւորում է միամիտ մտադաւ սրտերը և ոչ թէ պարզ ու բնական վերաբերմունքը: Այդպիսի ամեծցած պղպիկցած մանուկներին ծիծ կամ պրոպէ իրերի իսկական անուններն էլ չեն տալիս. ինչպէս կարելի է, ամ օթ է...

Փոխադրիչները շար անգամ էլ անտեղի յաւելլածներ են մէջ բերում՝ ինքն ըստ ինքեան հասկանալի բանը բացատրելով: Օրինակ՝ մի գործողութիւն կամ կացութիւն պարզէ ի պարզ ցոյց է տալիս բանի էութիւնը՝ գովելի կամ շարապարտելի, ուրախալի կամ սխալալի լինել: Էլ ինչ հարկ երկար ու բարակ ճոռոմբանութիւններին: Պատահում է, որ նոյն իսկ մի երկու բառ բռնի ներս խոթելով՝ բնագրի սուր ու ազդու ոճը ամբողջ հմայքից զրկում են: Այսպէս՝ շար գգուշաւոր գրիչ է պահանջում փոխադրութեան համար:

Հիմա շառնալով չափական զրաւքներից արած փոխադրութիւններին, չիշենք մանկական բանաստեղծութեան վերաբերեալ զլսում ասուածները, մանաւանդ Գեօթէի այն կարծիքը, որով նա առաջարկել էր նախ Ոչիտականի արձակը տալ պատանիներին, որպէս զի նրանք՝ ձևով չչափչափակելով՝ առաջ բովանդակութեանը լիակատար ուշադրութիւն շարձեն: Մեր շեռահասների գրականութեան մէջ կան մի քանի այսպիսի օրինակներ: Շմիդտի Ուրիսականն ու Իլիականը, Արևելեան Վիպաշխարհը, Ռոստէմ և Ջոհրաբը, Նալա և Գամայեանթին: Ընս յարգում եմ, — ասում է Գեօթէն, — շաշնակութիւնն (ոիֆմը) և յանգը, հէնց որով բանաստեղծութիւնը բանաստեղծութիւն է շառնում, սակայն իսկապէս հիմնական ու խոր ներգործութիւն անողը, ճշմարտապէս կրթիչն ու շահաբերն այն բանն է, ինչ որ բանաստեղծից մնում է, երբ նա արձակ շարադրութեան է փոխարկւում: Այն ժամանակ կը մնայ զուտ, լիակատար բովանդակութիւնը: Բովանդակութիւնից զուրկ գրածքը՝ շնորհիւ իր շլացուցիչ արտաքինի՝ մեզ պատրանքի մէջ է ձգում, իսկ երբ այդ ներքինը կայ, արտաքինը քոշարկում է նրան: Ուստի և շեռահասների զարգացման սկզբնաւորութեան համար արձակ թարգմանութիւնն ես ստելի շահեկան եմ համարում՝ քան չափականը, որովհետև նկատելի է, որ երեստաները, որոնք ամեն բան կատարկի տեղ են ընդունում, զարմանում են բառի հնչիւնի, վանկերի ել և էջի վրայ և մի տեսակ խեղկատակ չարածնութեամբ խանգարում են ազնւագոյն երկի խոր բովանդակութիւնը: Հետևաբար առաջարկում եմ խորհրդածութեան առնել, թէ արդեօք հարկաւոր չէր նախ Հոմերոսի արձակ թարգմանութեանը ձեռնարկել,

բայց ի հնրկէ, այդ թարգմանութիւնը պէտք էր որ արժանի լինէր այն աստիճանին, որի վրայ գերմանական գրականութիւնն այժմ կանգնած է: Այս խնդիրն ես յանձնարարում եմ մեր արժանաւոր մանկավարժների ուշադրութեանը, որոնց մեծ փորձառութիւնն ամենից լաւ կարող է ծառայել այս բանին:

Այս խօսքերից յետոյ ձեռնհաս փոխադրիչների գրչով կազմւած այդ կարգի գրականութեան գոյութիւնն ապացոյց է մասամբ իւր գոյութեան իրաւունքին. և մենք պէտք է մեծ կարեւորութիւն ցանք այս խնդրին, քանի որ չափական հմուտ թարգմանիչներ ունենալն առանց այն էլ մեզ համար շեւար բան է: Բազրապունիներ ու Յովմածեաններ սոսկական կրեոյթներ են և հազւագիւտ ասորդեր, որ կարող են պատիւ բերել նաև աւելի բարձր քաղաքակրթութեան սէր ազգերին: Բայց տեսէք, թէ որքան ծանր է, օրինակ, Ս. Գիւլզադեանցի «Ռոստէմ և Չոհրաբ» աշխարհաբար չափական թարգմանութեան լեզուն ու ոճը և որքան թեթեւ ու ակործալուր Ալաջեանցի փոխադրած «Ոսկի ձկնիկը» և Գ. Ասուածապրեանցի բանաստեղծած «Ռուսթաւելու սէրը»: Մեր բելլիպրիսպներն իսկապէս շեւ խոսքն են թողել այս հողը, նրանք քիչ բացառութեամբ կարծես խորշէլ են թարգմանութիւններից ու փոխադրութիւններից, թերևս այդ տեսակ գրական վաստակն այնքան էլ արժանաւոր բան չստեղծուի: Բայց տեսէք, թէ շասական հեղինակներն ինչպիսի հրճանքով ու գուրգուրանքով են վերաբերում միմեանց երկերին, որոնցով աշխատում են օր առաջ իրանց ազգային գրականութիւնն էլ հարստացնել: Ժամանակ է մեր գրականութիւնը ձոխացնելու նաև ընտիր փոխադրութիւններով: Երբ խօսքը Ուրիսիականի և Իլիականի մասին էր, ակնարկեցի, թէ որքան աւելի լաւ կը լինէր, եթէ նրանք թեթեւ գրչով արձակ ձևի վերածէին, եթէ ոչ բնագրից, գոնէ գրաբար թարգմանութիւնից: Յանկալի էր, որ Փ. Վարշանեանի Ուրիսիականի երկրորդ տպագրութիւնն ինկապի առնւած հասակին աւելի մտաշելի լեզով հրատարակւած լինէր:

Գէթէի չիչեալ կրկում մի հեղաբարձական կարծիք էլ ընտիր հատածների մասին կայ: Նա օրինակ է բերում Dodds beauties of Schakespeare զիրքը և այսպէս է խօսում Շեքսպիրից արած այս քաղաճքի վրայ. «Ինչ էլ որ ասելու լինէին ընդդէմ այդպիսի»

քաղաքներին, որոնք հեղինակները հաւուած հաւուած են հաղոր-
 ցում, այդ կորոններն այնու ամենայնիւ այս կամ այն լաւ ազդե-
 ցութիւնը գործում են: Զէ որ մենք միշտ այնքան տրամադիր չենք,
 ամեն մէկի ոգին միշտ այնքան ոյժ չունի՝ ամբողջ երկասիրութիւնն
 իր արժողութեամբ ըմբռնել կարողանալու համար: Զէ որ մի որ և
 է գրքում ստորագծում ենք այն տողերը, որ անմիջապէս մեզ են
 վերաբերում: Գեռահասներից մանաւանդ նրանք, որոնք զուրկ են
 հիմնաւոր զարգացումից գրաւում են և յուզում փայլուն տեղե-
 րով, և ես չիշում եմ կեանքիս իբրև գեղեցկագոյն շրջաններից
 մէկն այն, երբ չիշեալ երկն ինձանում հետք թողեց: Այն հիա-
 նալի առանձնայտրկութիւնները, ճարտար առածները, սքանչելի
 նկարագրութիւնները, զարճախօսական (հումորիստական) գծերը—
 ամենն ազդում էր ինձ առանձնապէս:— „Что читать детям“
 հեղինակաւոր գրւածքն էլ անհամեմատ աւելի բարձր է շատում
 ընտիր հեղինակներից վեր առած հաւուածները՝ քան այլանշակ
 փոխադրութիւնները: Ներկայումս հատրնտիր հաւուածները շատ
 ընշունելութիւն են գրել շատագրքերում, բայց իբրև ազատ
 ընթերցանութեան նիւթեր՝ նրանք գործածական չեն, գոնէ ինքս
 չեմ չիշում, որ տեսած լինեմ: Այդպիսի հաւուածները ազատ
 ընթերցանութեան նիւթ չինելիս, ի հարկէ, պէտք է կարևոր նա-
 խաբաններով ու բացատրութիւններով հրատարակեն:

Ե. ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՅՈՒՅՄՈՒՆՔՆԵՐ

Այլ առիթով ակնարկեցի, որ Դեռահասների համար հրատա-
 րակւած գրւածքներին՝ իբրև գեղարւեստի արտադրութեանց՝ ընտ-
 րութեան խնդրում առաջին սելը պէտք է գրագիտական տեսակէտը
 բունէ և ապա թէ պէտք է որ մանկավարժն էլ համաձայն իր մաս-
 նագիտութեան սկզբունքներին այդ ընտիր նիւթերից նպատակա-
 յարմարները վերընտրէ: Հետեալ տողերում հարկ զգացինք, որով-
 հետեւ աւելի ընդարձակ շրջանի համար է գրւածքս, գրքերի յաջող
 ընտրութեանը նպաստող կարևորագոյն ցուցմունքներ տալու: Ի նկատի
 պէտք է ունենալ, որ նրանք զորճնակալն բնաւ որութիւն ունին,
 որովհետեւ քաղաք են բազմաթիւ գրախօսակալաններից և այնպէս
 մշակւած:

Որ և է բանաստեղծական պատմածք քննութեան է առն ում ըստ կազմութեան, ըովանդակութեան ու լեզուի:

ա. Գործի ամենաշեւար մասն է կազմութեան քննադատութիւնը, որ կախում ունի օրնկտիւ ու սուրբնկտիւ հանգամանքներից: Առաջին տեսակինը կայանում է գեղարեստական օրէնքների ի նկատի առնելու մէջ, այսինքն՝ չափն ու միութիւնը պահպանելու, նոյնպէս և հոգեբանական ստուգութեանն (բացց ոչ թէ կեանքի մերկ իրականութեանը, այլ հոգեբանօրէն ճիշտն ու կարելին) ու պատմառականութեանը հետեւելու մէջ: Ինչպէս ասեց, գրածքի այն մասը քննադատելն աւելի հեշտ է, իսկ սուրբնկտիւ կողմը, որ անհատական առանձնայատկութիւններից կախում ունի, առանց այլ և այլութեան հնարաւոր չէ: Ան այս անհարականն է նաև այն վերին աստիճանի ուշագրաւ երևոյթի պատճառը, որ նոյն իսկ հռչակաւոր գեղարեստարաններին (էսթետիկոս) չի ջաջողում բանաստեղծելը, եթէ նրանք առանձին ձիրք չունեն: Գերմանացի մեծագոյն գեղարեստաբան Փ. Ֆրիչերի «Մէկն էլ» երկը, որ նա գրել է իբրև փորձ՝ մարտիկ են ցոյց տալիս Պիօ Ֆէրրիէրի իր «Դասախօսութիւններ գեղարեստի տեսութեան մասին ընդհանրապէս և բանաստեղծութեան մասնաւորապէս երկում իբրև հազագիւր օրինակներ չիղում է Տասսօին, Պոնէին, Էկստինգին, Նիլլէրին, Գեթէին, Վ. Հիւգօին, Մանցոնին ու Կարշիշին, որոնց մէջ միացած էին ստեղծագործական ու քննադատական ընդունակութիւնները: Բանաստեղծական գորութիւնն ու ձիրքն է երկին առանձնադատել կերպարանք տալիս, որի համար մի քանի գծերն էլ երբեմն բաւական են լինում, մինչդեռ քիչ հմտութիւն ունեցողը նոյն նպատակին հասնելու համար անհամեմատ աւելի նիւթ պիտի շոտայէ: Այսպէս ուրեմն թէօրիան աւելի տեսակէտներ է տալիս գրածքի առարկայական (օբեկտիւ) կողմը քննադատելու համար: Եւ լոկ տեսականը՝ առանց օրինակելի շասական գրածքների ուսումնասիրութեան՝ քննադատական կարողութիւն չի կարող առաջացնել: Գերմանական երևելի պատմաբան և գրականութեան պատմաբան Գերլինուսը տեղեկութիւն է տալիս, թէ ինչպէս իր քննադատական հայեացքը սրեց շնորհիւ դասական գրածքների և փոփոխութիւնների համեմատութեան, թէ ինչպէս այդպիսով իսկապէս մի տեսակ քննա-

դատական ընազը (ինտրինկո) առաջացաւ իր մէջ, Հմտալից քննա-
 ցարի լինելու համար մի բան էլ է պէտք, որի հուծիւնը անրա-
 ցարի լի է մնում, և առհասարակ ձիրք, փաշանդ, հանձար բաւե-
 րով ենք արտայայտում՝ աւելի նրա աստիճանները քան հուծիւնը
 որոշելով: Պլատոնի կարծիքով ոչ միայն բանաստեղծը պէտք է ի վե-
 րուսի ներշնչւած լինի, այլ և քննադատը. լոկ արեւսպը, ասում
 է նա, բանաստեղծ չի կորող ստորադասել: Քննադատը անմիջապէս
 աստուածներին չի ներշնչւած լինում, այլ բանաստեղծից, որ միջ-
 նորէ է հանդիսանում աստուածութեան ու քննադատի մէջ: Այս պե-
 շեկութիւնը գուց Ս. Նէւիրեովն¹ իր կողմից աւելացնում է. «Եսկա-
 կան քննադատի համար պահանջւում է ոչ այնքան վերացական
 տեսութեան գիտութիւն, որքան գեղեցիկի ուժեղ զգացում, որ
 պէտք է լինի, եթէ ոչ արտադրիչ, ինչպէս բանաստեղծի մէջ, գէթ
 իւրացուցիչ. քննադատի այս զգացումից է որ նրա մէջ ծնում է
 համակրութիւն բանաստեղծի հետ, և նա՝ ըստ Պլատոնի՝ այսպիսով
 աստուածային ներշնչման հաղորդակից է շառնում: Բոլոր մեծ քննա-
 դատները մասամբ նաև բանաստեղծ էին...: Գեղարեստի ամեն
 հանձար բնածին Դատար է: Ամեն կանոնների նմուշը նրա մէջ է
 հէնց (Լեսինգ): Ազգային քննադատից պահանջւում է, շարունա-
 կում է Նէւիրեովը,—որ գեղեցիկի զգացումը նրա մէջ իսկ և իսկ
 այն առանձնաչափութիւններն ընդունէր, որ գոյութիւն ունի իր
 ժողովրդի մէջ՝ համաձայն նրա կեանքի, մտածողութեան եղանակի,
 հակումների և սովորութիւնների: Այն ժամանակ ժողովուրդը հա-
 մակրում է քննադատին, այն ժամանակ քննադատը մարմնացնում
 է ժողովրդական գիտակցութիւնը»:

Բայց բանն այն է, որ գեղարեստական արտադրութեան նկատ-
 մամբ նոյն իսկ նշանաւոր գեղարեստագէտները միաբան չեն², ուր

1) Степанъ Шевыревъ, „Теорія поэзіи въ историческомъ раз-
 витіи у древнихъ и новыхъ народовъ“: Спб. 1887. 2-ое изданіе.

2) Վերին աստիճանի հեղաքրքրական են օրինակ Մ. Գլուշի «Գե-
 շարեստն ընկերաբանական տեսակէտից» երկում մէջ բերած ականաւոր
 քննադատների կարծիքները Վ. Հիւգոյի մասին: Արամայից Բրիւնեդիէր,
 Շերէր, Փագէ ու Հեննեկէն շատ վաղ են զարնում հոչակաւոր հեղինակին
 և Մերիմէն էլ նրան ուղղակի «խելագարի» տեղ էր ընդունում: Բայց ինքը

մնաց թէ ոչ մասնագէտները: Թէև գեղարւեստի գաղափարն էլ իսկուժեամբ որոշել չի կարելի, բայց որ նա գոյուժիւն ունի, այդ նրանիղ է երևում, որ գեղարւեստական կիրթ ճաշակի Կէր մարդիկ գեղարւեստի իսկական արտադրութիւնը շիւրաւ Կարբերում են ստորին գործից: Էմիլ Հեննեկէն իր Բիպական քննադատութեան փորձի մէջ ասում է, որ գեղարւեստական արտադրութեան գնահատութեան գործում նկմախայականութիւն (սուբյեկտիւիզմ) չերևան է գալիս ոչ թէ զգայնութեան (էմոցիա) յատկութիւնը որոշելիս, այլ այն ժամանակ, երբ բանը ստացած Կարբերութեան աստիճանին է գալիս: Այս վերջին տեսակէտից է, որ շնորհիւ քննադատի անհատական առանձնայատկութիւններին՝ նրանց մէջ առաջացած էմոցիաները միևնոյն գրաւքից համարեա միշտ Կարբերաստիճանների են հասնում:

Բանաստեղծութիւնն իր լիակատար ու վճիպ պատկերներով յարկչապակում է մեզ և հարկադրում այսպիսով ընթերցումը շարունակել. նա վարժեցնում է մանրագնին շիպողութեան և երբ Մեր երևակայութիւնը վերարդարում է ներկայացրած պատկերները, այն ժամանակ մենք էսթետիկական զգացումով ենք համակուում, Մեր մէջ զարգանում են քննադատական նորմաներ (բարձրագոյն կանոններ), որոնցով կարողանում ենք ուրիշ գրաւքները չափել: Եւ երևակայութեան այս գործունէութիւնն է, որ զարգացման համար մեծ նշանակութիւն ունի: Այսպէս ուրեմն ճշմարիտ բանաստեղծութեան ոյժն ինքն ըստ ինքեան՝ առանց բռնազբօսիկ միտումների՝ աւելի կրթիչ ազդեցութիւն և ոյժ ունի Դէպի բարոյական գործ մշելու: Անոր բանաստեղծութիւնը գեղագիտական ճաշակի հետ նաև բնաւորութեան զարգացման է նպաստում: Նրա ներքին զօրութիւնը ընթերցողին գրաւում ու չառաջ է մղում նորանոր կենսական հոսանքներ առաջացնելով նրա մէջ կամ արդէն եղածներին ոյժ Կալով: Ճշգրիտ բանաստեղծը հայրենասիրական ու կրօնական

Գիւլօն մանրամասն վերլուծութիւններով (անալիզներով) ցոյց է Կալիս՝ որ այդ մարդիկը կամ թափանցել չեն նրա գաղափարների մէջ և կամ թէ չէ՝ նախապաշարած են: Չէ որ իրանց գոված բանաստեղծներն էլ նոյն թերութիւններն ունին:

զգացումները մէջ էլ խոր թափանցել գիտէ ու մեզ էլ իր հետ ուրիշ երևից գրաւելու, գանձելու ձգողական զօրութիւն ունի:

Պատմածքի էական արժանիքը կաշանում է նրա կենտրոնացման վրայ: Նրա ամբողջ բովանդակութիւնը պէտք է շարունակ իր կէտ նպատակը՝ հերոսների ընկալողութիւնը (ձգարումը, միտումը)՝ աչքի առաջ ունենալով շիմէ կազմակերպւած կամ հետզհետէ կազմակերպւող շարժիչների պարկերացմանը: Հմուտ բանաստեղծը՝ զործող անձերին, ինչպէս հարկն է, պլաստիկ ներկայացնելու համար՝ շարունակ նորանոր կացութիւններ (սիրուացիա) է սրելու, որպէս զի նրանց կրկին ու կրկին առիթներ ներկայացնել՝ իրանց ներքինն աւելի ու աւելի բազմակողմանի և ազդու կերպով արտայայտելու: Հետեւաբար արեւսյւր խօսելու և զործելու առիթներ է պահանջում և ոչ թէ երկար ու բարակ մենախօսութիւններ (մտնող) ու պրամախօսութիւններ (շիալոգ): Այդ առաջին ձևի արտայայտութիւնն՝ իբրև շրամային յարուկ բան՝ վիպական գրածքի սահմաններից դուրս պէտք է մնայ. լսել ինչ վերաբերում է պրամախօսութեանը (շիալոգ), նա պէտք է նկարագրուի թիւնների հետ ներշնչման ու արտաշնչման պէս որոշ չափով ու պակասով փոփոխակի յերևան գայ, եթէ ոչ՝ մէկի կամ միւսի գերակշռութիւնն անմիջապէս պաշտակի կը շառնայ: Տրամախօսը, երբ չափազանց յուզւած է, աւելի քիչ է արտայայտում իր ներքին աշխարհը՝ քան երբ նա արդէն որոշ չափով հանդարտել է: Անն հեղինակներ, որ այս հոգեբանական երևոյթին հակառակ են վարուում: Երկրորդական զործող անձին էլ պէտք է համակերպեն կենդանացմանը, իրանց առընչութիւնն ակներև կացուցանելով հանդերձ, նրանք պէտք է որ չափ պահպանեն: Հմուտ գրիչը մի քանի բնորոշ գծերով այնպիսի պարզ արտայայտութիւն է տալիս երկրորդականին, որ նա անմոռանալի է մնում, մինչդեռ ուրիշը շաք էջեր է լցնում նոյն նպատակին հասնելու համար՝ մինչև այն աստիճան, որ շաք անգամ ապակենդրոնացում է առաջանում և այսպիսով գլխաւոր հերոսը դադարաբարում է մոռացման ու վերջն էլ բեմի ելուր մնալու: Նոյն տեսակ սխալ ընթացքի մէջ է դրնում հեղինակը, եթէ նա վճռական դարձակետերի վրայից հարեանցի է անցնում, իսկ երկրորդականը՝ մանրակրկիտ չկարգաբերում: Վարդական ու կրօնական տար-

րերն էլ պէտք չէ շատ աչքի ընկնեն, քարոզաբանութեան շիրք բռնեն, այլ պէտք է նրանք ներկայանան իբրև գործողութեան շարժիչներ:

ը. Նիւթի ընտրութիւնը: Նկատուած երևոյթ է, որ ձեռնհաս գրիչները վստահ լինելով իրանց նկարագրական կարողութեան վրայ, կարիք չեն գգում արտաքոյ կարգի և մեծ մասամբ անբնական յուզիչ շարժառիթների օգնութեանը շիմելու, մինչդեռ կեղծ բանաստեղծն իր փրկութիւնն հէնց այդպիսի միջոցների մէջ է որոնում, գիտնալով որ այլ կերպ նա հնարաւորութիւն չունի սպաւորութիւն գործելու: Ծինծու բանաստեղծութիւնը մի կողմից մարմնացեալ շեւեր է ներկայացնում, միւս կողմից՝ իրեշտակներ. նրա համար կարծես սովորական մարդը գոյութիւն չունի: Սրբեստեղծութեան թշառութիւն թշառութեան վրայ, հարւած հարւածի վրայ իջեցնում է նոյն իսկ մանուկ հերոսների գլխին՝ նրանց հասակաւորների շերերի մէջ մտցնելով: Ի հարկէ, կեանքի անագորոյն պահանջներն անբաղդ ու չքաւոր ընտանիքների զաւակներին երբեմն աւելի շուտ են հասունացնում, բայց և այնպէս կարիքը շատ էլ հրաշագործ չպէտք է ներկայացնել. չէ որ նա շատ անգամ ընկնում ու բոլորովին ոչնչացնում է նոյն իսկ հասակաւոր, բնաւորութեան սէր մարդուն: Մանկան պահանջներին տեղեակ հեղինակը ոգևորիչ անձնւիրութեան, կարեկցութեան և այլն օրինակներ է տալիս, մանրակրկիտ նկարագրելով կացութիւնները, բայց այնպէս բնական կերպով, որ ընթերցողը միտման (տենդենցիա) նշոյն անգամ չի նշմարում, մինչդեռ ձիրքից զուրկ գրիչը ձգտում է մեծահնչիւն բառերով, սրտաշարժ տեսարաններով գրաւել ընթերցողին. մերձաւորների մահը, մանուկ հերոսի մեռնելու իլձը, կրօնական ու բարոյական չափազանց ուժեղ ձգտումները, անհ նրանց բանահիւսութեան ապաւէնները, հիմնաքարերը: Քրանց Հովհաննէսն ու Գուստաւ Նիրիցը Գերմանիայում շինծու գրւածքների ամենից շատ աչքի ընկնող ներկայացուցիչներն են, որոնցից առաջինի գրւածքներից տարաբաղաբար մենք էլ ենք թարգմանել՝ «Բարեկամութեան զոհերն» ու «Ուրնէն»: Գերմանիայում քիչ չաձնարարական գրացուցակներ կան, ասում է Ն. Վոլգաստ, որոնց մէջ սրանք ընդունւած չլինէին. մինչդեռ անբնական ու անճշակ բովանդակութեամբ նրանք աւելի

չարիք են առաջացրել՝ բան բոլոր Ֆանրաստիկական և շնչական պատմաճիւղները, որովհետև նրանք մանուկների կեանքից առնաժ լինելով իրականութեան շէմ մեղանչում են ու այսպիսով կեղծաւորութիւն զարգացնում: Ապա Առլգասորը գարմանքով հարց է առջարկում, թէ արդեօք ի՞նչ պատճառով շեռ մինչև հիմա այդպիսի ընդունելութիւն են գտնում այդ գրքերը. անսասան առաքինութեան նկարագրութիւններն են մարդկանց կաշառում, չարում է նա: Հոփմանն ինքն էլ է ցաւելով խոստովանած եղել, որ ապսպըրանքով (զակազ) հարկադրեաժ է եղել որոշ ժամանակամիջոցներում անպատճառ պահանջաժ քանակութեամբ գրքեր թխել:

Սէրն ու սիրային յարաբերութիւնները երկու սեռի մէջ չպէտք է անպատճառ շուրս վանել շեռահասների գրեաժքներից, բայց այդ տարրը պէտք է շասական հեղինակների նրբամրութեամբ նկարադրեաժ լինի և ոչ թէ անկոչ վրձինի լերկ պատկերներ ներկաջացնէ: Օրիորդների համար առանձին գրականութիւն ստեղծելը մի շինծու երեւոյթ է, թէև կանացի տիպերն իրանց հեզ բնաւորութեամբ, նուրբ տակրով համասեռ ընթերցողին աւելի են գրաւում: Ընթերցողն առհասարակ իր համասեռի կեանքովն աւելի է հետաքրքրում, բայց բանաստեղծութեան նպատակն է նիւթական հարցասիրութիւնից շէպի գեղարւեստականն առաջնորդել: Քանի որ հասակաւորների գրականութեան մէջ առանձին կանացի հպրեաժի գոյութիւնը անմիտ բան պիտի համարէր, ինչ կարիք շեռահասների կեանքից մի այդպիսի բան հնարելու: Չէ որ այս հասակի մէջ սեռական կեանքի առանձնաշարկութիւններն այնքան աչքի էլ չեն ընկնում: Երբ ներկայումս, ասում է Առլգասորը, կանանց ինքնուրոյնութեան խնդիրն ուժեղ հոսանք է առաջացնում, կղզիացնող գրականութիւնը միայն արգիլք կարող էր լինել այդ ընթացքին: Գործող անձերը, եթէ մանուկներ են, ի հարկէ աւելի են գրաւում իրանց հասակակիցներին, բայց հասակաւորներն էլ պէտք է նրանց հետ շարաբերութեան մէջ մտնեն: Ինչպէս որ հասակաւորը հաճութեամբ է կարդում մանկական ընտիր գրեաժքը և գործող անձերի մանկական հասակը չի խանգարում տպաւորութեանը, այնպէս էլ շեռահասների վերաբերմունքն է. նա հասակաւորի կեանքով էլ կը հետաքրքրուի, միայն եթէ իր հասողութեան

համապատասխան, պարզ ու զբաւիչ կերպով է նկարագրւած: Ժամանակակից գեղարեստի նշանաբանն է նախադասել ներկան ու հայրենիքը, որոնց շրջանից են հեղինակները նիւթերն ընտրում ու մշակում, բայց շեռահասների գրականութիւնն այդ հոսանքից չեւ է մնացել, որ լաւ նշան չէ նրա համար: Այս շրջանից վեր առած նիւթերը, որ շեռահասի սրտին ու հոգուն մօտ են, նրան աւելի են գրաւում, նրա վրայ աւելի մնացուն պաււորութիւններ գործում, թէև հեռաւոր երկիրներում կատարւած նորանշան կամ արկածալի անցքերը նրա երեւակայութիւնն աւելի յափշտակէին: Այս հայրենական նիւթերի ընտրութեան ու աջողակ մշակման տեսակէտից նշանաւոր են Հեքէլ, Եսորմ, Ի. Սպիրի, Է. Դը Ամիլիս և մասամբ Անդերսէն: Ընտանի աշխարհից քաղւած նիւթերը բնածին ոչ ոք ունին, այնպէս որ նրանց ձեռնարկող թոյլ ու միտումաւոր գրիչներն էլ որոշ չափով պաււորութիւն են գործում: Այդ հեղինակների անմիջական զննողութեան շնորհով տեղական պատկերները պարզ ու ուշիւէջ գոյներով են նկարուած և այսպիսով գրաւել շահում: Այսպիսի գրողներից են Հորն, Գլաուբ-ռէլտր և այլն: Ելիզէ Աւերդիլն առաջինն էր, որ չիտուն պարի առաջ այս ծրագրով հեղինակեց իր վեց հարորանի գիրքը: Խօհաննա Սպիրի պեւ է մանկական աշխարհին սիրուն գրւածքներ շէշ-ցարական կեանքից: Իս. Յարութիւնեանցը նրանցից լաւագոյններն ընտրել ու թարգմանել է վճիտ լեզուով:

Պատկերը գրւածքի բովանդակութեան բաղադրիչ մասն է, քանի որ նրա լուսաբանութեանն է նպաստում, ուստի և հէնց այս հարւածում պէտք էր զբաղել պատկերազարդ գրքի խնդրով: Որքան ինձ յայտնի է, այս խնդիրը մեզանում մասնաւոր ուշադրութեան առարկայ չէ դարձել, և այդ գլխաւորապէս այն պարճաւով, որ իսկապէս բացի շատագրքերից մեր ժողովրդական ու մանկական գրքերը միայն իբրև բացառութիւն պատկերազարդ են հրատարակել: Իսկ գունատիպ պատկերները, որոնք մասնաւոր մանկան գրքերի համար մեծ նշանակութիւն ունին, և, եթէ կարելի է այսպէս ասել, նրանց թւերն են, մեր մէջ շեռ նոր են լոյս տես-

նում՝ շնորհիւ Թ. Հ. Հ. Ընկերութեանը: Նպատակիցս շուրս է մեր հալ ու մաշ եղած բազմաշարչար կլիշէների փոփոխի մասին խօսելը, որոնց իւրաքանչիւրը բազմապիսի շերեր են կապարել ու փակուին կապարում են:

Նախ փեսնենք, թէ եւրոպական սպազորական գործում ինչ շրութեան մէջ է այս խնդիրը և ապա շաւնանք մերայիններին ու աչքի անցնելով եղածները՝ փեսնենք, թէ ինչ պէտք էր ու կարելի էր անել: Հետեւել հարածը քաղած է Հ. Վոլգաստի. «Պատկերագրքեր և պատկերագրաշերտ մենագրութիւնից ¹, որ քննադատել է մի ժողովում և ապա մի հեղինակաւոր մասնագէտի ցուցմունքներին համապատասխան փոփոխութեանց ենթարկելուց յետոյ՝ հրատարակել է նրա հաճութեամբ ու մեծ շղթայուն առաջացրել հարստահարիչ հրատարակիչների շրջանում, որի շահերին շար ընդդէմ է եղել հեղինակի անաչառ ու խիստ քննադատութիւնը:

Հեղինակն իր էական պահանջմունքի հիւրն այս խօսքերով է շնում. արեւստագործի նպատակն է հասակաւորին զեղարւեստական վայելք պատմառել, և որովհետեւ կրթութեան էլ նպատակն է մանկանը շէպի հասակաւորների մտածումների և զգացումների աշխարհն առաջնորդել, ուստի և պէտք է որ պատկերը մանկան համար էլ միևնոյն նշանակութիւնն ունենար: Բայց որովհետեւ մանկան զեղազարկական ճաշակը սաղմային շրութեան մէջ է, ուստի և նա իր զարգացման աստիճանում բոլորովին անխորշ է որ և է պատկերագրքի արժէքը չափել: Ինչպէս ընթերցողը փեսնում է, հեղինակը խօսքը բաց է անում նախ ոչ թէ պատկերագրաշերտերի, այլ պատկերագրքերի մասին, որ Եւրոպայում, ինչպէս գրածքին ներածութեան մէջ փեսանք, շար փարածած են և սերտ կապ ունեն մեր բուն խնդրի հետ ²: Ուրեմն հէնց իսկպէս երկու փարեկան հասակից, երբ մանուկն սկսում է արդէն պատկերներ ծանաչել ու գրաւել նրանցով, պէտք էր հիմք շնել զեղագիտական

¹ Heinrich Wolgast, «Ueber Bilderbuch und jleustrationen». 1894 40 կողմի:

² Այս պատկերագրքերը Ռուսիայում էլ գոյութիւն ունին Տես «ЧТО ЧИТАТЬ ДВЯТЬМЬ» 11—25 և 37—38 էջերի բաւականին մանրամասն ու հիմնաւոր խորհրդածութիւնները:

ճաշակին, քանի որ առաջին սպառուածութիւնները հիմնական նշանակութիւն ունին: Բայց 1000 պարկերազարդ գրքերից հազիւ մէկը բարձր ձգտումներով է առաջնորդուած, քանի որ այդ 999-ը միայն մանկական անզուսպ հետաքրքրութեանը բաւարարութիւն ստալուն ծառայում և 1000 մանուկներից 999-ին գիրքը ստուգելով է մանկական քմահաճոյքին ծառայելու սկզբունքով: Ամենից աւելի այն սկզբունքի կողմն են բռնում, երբ խնդիրը նախատեսումնարանական կեանքին է վերաբերում: Վիտորիկների համար այդքանն էլ բաւական է: Ինչ վերաբերում է բնական գիտութիւնների և աշխարհագրական գրքոյկների բացատրիչ պարկերներին, որոնք շուրջ են մտում գեղագիտական քննադատութեան շրջանից, նրանք գոնէ պէտք է պարզ ու ճիշտ սիւս ունենան: Ինքն ըստ ինքեան պարզ է, որ ծաղրանկարները (կարիկատուրները) բոլորովին անտեղի բաներ են մանկական գրքում, քանի որ նրանք գեղարւեստական ճաշակից զուրկ մանկական միայն խանգարմունք կարող են պատճառել: Եւ որովհետեւ մանկանն անհասկանալի է ծաղրանկարի ներքին իմաստը, ուստի և նա շնորհիւ ծաղրանկարների կը վարժւէր այսպիսով թեթեւ վերաբերել ամեն բանի և խորամուխ չէր լինիլ տեսածի մէջ:

Եւրոպական երկրորդ պահանջն այն է, որ կրթական տեսակետից միշտ նախընտրելի է և աւելի գնահատելի գունատագրութիւնից ձեռք վերցնել՝ պարզ փայտաքանդակներով բաւականանալով՝ քան խաւարտիկ ձաբարութեով ճաշակին սխալ ուղղութիւն տալ:

Երրորդ պահանջով՝ պարկերի մէջ անձերն այնպէս ընտրող պէտք է լինին, որ նրանք բնագրից անկախ կեանք ներկայացնեն ու հետեւաբար ինքնուրոյն արժէք ունենան՝ նոյն իսկ տգէտին հասկանալի լինելով: Բացառութիւն պիտի կազմեն, իհարկէ, պատմական պարկերները, որոնք կարօտ են բացատրութեան: Որպէս զի պարկերները բնագրի իմաստին ու ոգուն համապատասխան լինին, պէտք է որ ձեռնարկողը ոչ միայն արւեստագէտ լինի, այլ և հարկ անհրաժեշտ է, որ նա ընազիրը հիմնատրուպէս ուսումնասիրէ և կարողութիւն ունենայ նկարագրեաժ կեանքի ամենանպաստուոր և շիտոշ սովետներն ըմբռնելու: Որ պարկերը բնագրին չպէտք է հակասէ, այդ ինքն ըստ ինքեան հասկանալի պահանջ է, բայց կա-

րևոր է համարուում այս բանը մասնաւորապէս շեշտել անհաւատալի
իրողութեանց հանդէպ, քանի որ սեանում ես, թէ մարդիկ ինչպէս
այդ պահանջն անրես են անում:

Պատկերազարդ գրքերի մասին շար բան չի կարդացում գրա-
կանութեան մէջ: Գրախօսականներն առհասարակ բաւականանում
են լլաւ է, ընդիր է՝ կամ զգեղարեւտական պահանջներին անհա-
մապատասխան է և այլն կորուկ շարձաճներով: „Jugendchriften-
Warte“ թերթի անցեալ 1898-ի թ. 8 և 9 համարներում պատ-
կերների նոյն իսկ լինել չլինելու վրայ վիճաբանութիւն բացեց,
որից հանսձս էական կէտերը առաջ կը բերեմ:

(Շարունակելի)